



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Մ Ա Ն

« 05 » « հոկտեմբեր » 2022 թ. № 353-Վ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի № 469-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և
հիմք ընդունելով Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի № 1702-Ն որոշման 2-
րդ կետը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի ի № 745-Լ որոշման 18-րդ կետի 20-
րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել պետական անտառների և անտառային հողերի օգտագործման
պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի
նոյեմբերի 29-ի «Պետական անտառների և անտառային հողերի օգտագործման
պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» № 469-Լ հրամանը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

10/5/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

« 05 » « հոկտեմբեր » 2022թ.
ք.Երևան

Հավելված

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի
2022 թվականի հոկտեմբերի 05-ի թիվ 3532 հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ)

ք. Երևան
20__թ.

«__» _____

«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Վարձատու), ի դեմս տնօրեն _____-ի (ծնված _____ թ-ին, ՀԾՀ՝ _____, անձնագիր՝ _____ տրված _____-ին _____-ի կողմից, հաշվառման հասցե՝ _____), ով գործում է Վարձատուի կանոնադրության համաձայն, ում անունից, համաձայն _____20__թ-ի թիվ _____ լիազորագրի, հանդես է գալիս _____ը (ծնված _____ թ-ին, ՀԾՀ՝ _____, անձնագիր՝ _____ տրված _____-ին _____-ի կողմից, հաշվառման հասցե՝ _____) մի կողմից, և _____-ը (_____), (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից, այսուհետ միասին անվանվելով՝ Կողմեր, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1702-Ն որոշման 2-րդ կետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն և 2010 թվականի հունիսի 03-ի թիվ 668-Ն որոշումներով, մրցույթի արդյունքների մասին 20__ թվականի _____-ի թիվ _____ արձանագրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Վարձատուն պարտավորվում է Պայմանագրի 2.2.-րդ կետով սահմանված վարձավճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրել __ (__) հա մակերեսով՝ Պայմանագրի 1.3.-րդ կետում նշված հողամասը (այսուհետ՝ Հողամաս)՝ համաձայն Պայմանագրի հավելվածը կազմող հողամասի հատակագծի, իսկ Վարձակալը պարտավորվում է վճարել դրա դիմաց Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

1.2. Հողամասը տրամադրվում է _____ նպատակով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 27-րդ կետի համաձայն ներկայացված

անտառօգտագործման ծրագիրը (այսուհետ՝ Անտառօգտագործման ծրագիր) իրականացնելու պայմանով:

1.3. Հողամասը գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «___ անտառտնտեսություն» մասնաճյուղի ___-ի անտառապետության տարածքում (կադաստրային ծածկագիր՝ _____, հողատեսքը՝ անտառ):

1.4. Քարտեզ-էսքիզը և տեղագնման ակտը կցվում են հավելվածի տեսքով:

1.5. Պայմանագրի գործողության ընթացքում Հողամասի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.6. Հողամասի նկատմամբ գրանցված սահմանափակումներ առկա չեն՝ համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից ___.__.20__ թվականին տրված _____ միասնական տեղեկանքի:

1.7. Հողամասի օգտագործման նկատմամբ սահմանափակումները սահմանված են Պայմանագրի 1.2.-րդ կետով, 3.4.1.-ին, 3.4.3.-րդ, 3.4.4.-րդ, 3.4.8.-րդ, 3.4.9.-րդ և 3.4.12.-րդ ենթակետերով:

2. Պայմանագրի գործողության ժամկետը, վարձավճարի չափը, վարձավճարի վճարման և վարձավճարի չափի փոփոխման կարգը

2.1. Պայմանագիրը կնքվում է __ (___) տարի ժամկետով և գործում է մինչև «___» ___-ի 20__ (երկու հազար _____) թվականը ներառյալ:

2.2. Վարձավճարի չափը կազմում է տարեկան __ (_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Վարձավճարի ամսական չափը կազմում է __ (_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2.3. Վարձավճարը վճարվում է յուրաքանչյուր օրացուցային ամիս՝ տարեկան վարձավճարն ըստ ամիսների բաշխված հավասար չափերով, տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ից (տասնհինգից) ոչ ուշ՝ Վարձատուի գանձապետական 900018002270 հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Առաջին ամսվա վարձակալական վճարումները կատարվում են որպես կանխավճար՝ ոչ ուշ, քան Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում: Վերջին ամսվա վարձակալական վճարումները կատարվում են ոչ ուշ, քան մինչև Պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 10-ը (տասը):

2.4. Հողամասի կադաստրային արժեքի և/կամ անշարժ գույքի հարկի հարկման բազայի և/կամ դրույքաչափի բարձրացման դեպքում Վարձատուի պահանջով Պայմանագրի 2.2.-րդ կետում նշված վարձավճարի չափը ենթակա է այդ բարձրացմանը համամասնորեն ավելացման, որի պարագայում Վարձատուն պարտավոր է վարձավճարի փոփոխման մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցել Վարձակալին: Մեկամսյա ժամկետը հաշվարկվում է ծանուցումը Վարձակալի կողմից ստանալուն հաջորդող օրվանից: Նոր հաշվարկված վարձավճարի չափը ենթակա է կիրառման սույն կետով սահմանված ծանուցման մեկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից: Վարձավճարի չափի փոփոխման վերաբերյալ սույն կետով սահմանված ծանուցումը Վարձակալի կողմից ստանալուն օրվան հաջորդող տասնհինգօրյա ժամկետում Կողմերը կնքում են Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ սահմանելով սույն կետի համաձայն որոշված վարձավճարի նոր

չափը և դրա հաշվարկման ժամկետի սկիզբը, որը պետք է սկսվի սույն կետով սահմանված ծանուցման մեկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից:

2.5. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նոր՝ Պայմանագրի 2.2.-րդ կետում նշված վարձավճարի հաշվարկման համար հիմք հանդիսացած չափի համեմատ ավելի բարձր նվազագույն չափ սահմանվելու դեպքում Վարձատուի պահանջով Պայմանագրի 2.2.-րդ կետում նշված վարձավճարի չափը ենթակա է այդ բարձրացմանը համամասնորեն ավելացման, որի պարագայում Վարձատուն պարտավոր է վարձավճարի փոփոխման մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցել Վարձակալին: Մեկամսյա ժամկետը հաշվարկվում է ծանուցումը Վարձակալի կողմից ստանալուն հաջորդող օրվանից: Նոր հաշվարկված վարձավճարի չափը ենթակա է կիրառման սույն կետով սահմանված ծանուցման մեկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից: Վարձավճարի չափի փոփոխման վերաբերյալ սույն կետով սահմանված ծանուցումը Վարձակալի կողմից ստանալուն օրվան հաջորդող տասնհինգօրյա ժամկետում Կողմերը կնքում են Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ սահմանելով սույն կետի համաձայն որոշված վարձավճարի նոր չափը և դրա հաշվարկման ժամկետի սկիզբը, որը պետք է սկսվի սույն կետով սահմանված ծանուցման մեկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Վարձատուն իրավունք ունի՝

3.1.1. Վարձակալից պահանջելու Հողամասը տիրապետել և օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով, Պայմանագրի պայմաններին և Հողամասի նշանակությանը համապատասխան, պահանջելու պահպանել Հողամասի օգտագործման նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Պայմանագրով նախատեսված սահմանափակումները:

3.1.2. Վարձակալի կողմից վարձավճարի վճարման ժամկետի երկու անգամ անընդմեջ կամ մեկ տարվա ընթացքում առնվազն երկու անգամ խախտման դեպքում նրանից պահանջելու վաղաժամկետ, միանվագ վճարմամբ վճարել խախտման հետևանքով չվճարված վարձավճարը, ինչպես նաև տույժ՝ Պայմանագրի 4.1.-ին կետով սահմանված չափով:

3.1.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված դեպքում ու կարգով վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը:

3.1.4. Ցանկացած ժամանակ պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով Վարձակալի կամ նրա ներկայացուցչի հետ միասին մուտք գործել Հողամաս՝ չխոչընդոտելով Վարձակալի բնականոն գործունեությունը:

3.1.5. Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելուց կամ դադարեցվելուց հետո Վարձակալի գրավոր համաձայնությամբ կամ Վարձատուի ծանուցմամբ սահմանված ողջամիտ ժամկետում բաժանելի բարելավումները և ամրակայված բաժանելի գույքը Վարձակալի կողմից Հողամասից չհանելու դեպքում իր հայցողությամբ տնօրինելու այն:

3.1.6. Օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներից:

3.2. Վարձատուն պարտավոր է՝

3.2.1. Հողամասը հանձնել Վարձակալին ոչ ուշ, քան Պայմանագրից բխող վարձակալության իրավունքի պետական գրանցման օրվան հաջորդող աշխատանքային օրը.

3.2.2. Չմիջամտել Վարձակալի գործունեությանը, եթե այդ գործունեությունը վնաս չի պատճառում Հողամասին, շրջակա միջավայրին և չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

3.3. Վարձակալն իրավունք ունի՝

3.3.1. Տիրապետելու և օգտագործելու Հողամասը՝ Պայմանագրի պայմաններին և հողի նպատակային նշանակությանը համապատասխան.

3.3.2. Ինքնուրույն տնօրինելու Հողամասի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները.

3.3.3. Պայմանագրի 3.3.4.-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ իրականացնելու հողամասի նպատակային նշանակությանը և Պայմանագրին համապատասխան բաժանելի բարելավումներ:

3.3.4. Ցանկացած բաժանելի բարելավում իրականացնելուց առվազն 15 օրացուցային օր առաջ գրավոր տեղեկացնել Վարձատուին և բաժանելի բարելավումն իրականացնել միայն Վարձատուի գրավոր համաձայնությամբ՝ պահպանելով ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» թիվ 896 որոշմամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները: Վարձատուն սույն կետով սահմանված գրավոր համաձայնություն տալու հարցը քննարկում և Վարձակալին պատասխանում է Վարձակալի դիմումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում.

3.3.5. Միայն Վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներում Հողամասը ենթավարձակալության հանձնել երրորդ անձի.

3.3.6. Անտառօգտագործման ծրագրով սահմանված ժամկետներում կառուցելու Անտառօգտագործման ծրագրով նախատեսված ժամանակավոր շինություններ, որոնք Պայմանագրի գործողության ավարտից հետո Վարձակալի միջոցներով ենթակա են քանդման կամ կարող են Կողմերի գրավոր համաձայնությամբ սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել Վարձատուին:

3.4. Վարձակալը պարտավոր է՝

3.4.1. Հողամասն օգտագործել բացառապես Պայմանագրով սահմանված պահանջներին և Հողամասի նշանակությանը համապատասխան.

3.4.2. Պայմանագրի 2.-րդ բաժնով սահմանված կարգով և ժամկետներում վճարել վարձավճարը.

3.4.3. Հողամասն օգտագործել Անտառօգտագործման ծրագրին համապատասխան, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և կցվում է Պայմանագրին՝ որպես հավելված, և տարեկան մեկ անգամ՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը, Վարձատուին ներկայացնել Անտառօգտագործման ծրագրի իրականացման վերաբերյալ գրավոր

հաշվետվություն՝ դրան կցելով Անտառօգտագործման ծրագրի իրականացումը հավաստող փաստաթղթերը և այլ նյութերը.

3.4.4. Թույլ չտալ Հողամասի այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի Հողամասի արժեքի նվազեցմանը, որակական բնութագրերի և բնապահպանական վիճակի վատթարացմանը.

3.4.5. Ցանկացած ժամանակ պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ապահովել իր կամ իր ներկայացուցչի հետ միասին Վարձատուի և (կամ) Անտառային կոմիտեի իրավասու աշխատողների ազատ մուտքը Հողամաս՝ Վարձակալի բնականոն գործունեությանը չխոչընդոտելու պայմանով.

3.4.6. Պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետը լրանալուց կամ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումից հետո ողջամիտ ժամկետում միջոցներ ձեռնարկել իր կողմից Հողամասի վրա կատարված բաժանելի բարելավումները հանելու միջոցով Հողամասը ազատելու և Հողամասը բարեկարգ վիճակում, հաշվի առնելով բնական վատթարացումը, հանձման-ընդունման ակտով Վարձատուին հանձնելու համար.

3.4.7. Վարձակալված Հողամասի վրա գտնվող և Վարձակալին սեփականության իրավունքով պատկանող ամրակալված գույքը երրորդ անձի մոտ գրավ դնելու կամ օտարելու դեպքում նախապես գրավոր տեղյակ պահել Վարձատուին.

3.4.8. Հողամասի տարածքում կանաչապատում իրականացնելիս բուսատեսակների ցանկը նախապես գրավոր համաձայնեցնել Վարձատուի հետ՝ տվյալ տարածքի համար օտարածին տեսակների ներմուծումը կանխարգելելու համար.

3.4.9. Պահպանել Հայաստանի Հանրապետության անտառային, քաղաքացիական, հողային և ջրային օրենսգրքերի, «Կենդանական աշխարհի մասին», «Բուսական աշխարհի մասին», «Թափոնների մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները և սահմանափակումները, այդ թվում՝ նաև հետևյալ պահանջները.

ա. ըստ անհրաժեշտության՝ սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույլտվություն.

բ. Հողամասի տարածքն ապահովել խմելու և կենցաղային ջրով.

գ. տեղադրել կեղտաջրերի լոկալ մաքրման կայաններ (այդ թվում՝ սեպտիկ հորեր).

դ. ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիգիենիկ պահանջներին, սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան հասարակական զուգարանների առկայություն.

ե. ապահովել Հողամասի տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը՝ կնքելով պայմանագիր աղբահանություն իրականացնող կազմակերպության հետ կամ տարածքի մաքրությունն ու աղբահանությունն իրականացնել սեփական միջոցներով.

3.4.10. Պայմանագրի ստորագրման և նոտարական վավերացման օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, այն ներկայացնել Կադաստրի կոմիտե՝ իրավունքների պետական գրանցման համար, և իր միջոցների հաշվին կատարել Պայմանագրից ծագող իրավունքների պետական

գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր ծախսերը, այդ թվում՝ վճարել պետական տուրքերը և նոտարական ծառայության վճարը.

3.4.11. Առանց Վարձատուի գրավոր համաձայնության վարձակալության իր իրավունքը լրիվ կամ մասնակիորեն երրորդ անձի չփոխանցել կամ չզիջել, Հոդամասի նկատմամբ գույքային իրավունքները գրավ չդնել, իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում չներդնել կամ Հոդամասն օգտագործման իրավունքով (հատուցմամբ կամ անհատույց) երրորդ անձի չտրամադրել.

3.4.12. Ապահովել Հոդամասի պահպանությունը Հայաստանի Հանրապետության անտառային օրենսդրությամբ սահմանված խախտումներից.

3.4.13. Պայմանագրի 2.4.-րդ և 2.5-րդ կետերով սահմանված դեպքերում Վարձատուի կողմից Պայմանագրի փոփոխման առաջարկ (ծանուցում) ստանալու դեպքում նույն կետերով սահմանված ժամկետներում օրենքով սահմանված կարգով Վարձատուի հետ կնքել համապատասխան փոփոխության համաձայնագիր, իսկ անհամաձայնության դեպքում՝ 10-օրյա ժամկետում Վարձատուին ներկայացնել գրավոր առարկություններ.

3.4.14. Պայմանագրի կնքման օրվանից և Վարձատուի կողմից համապատասխան հաշվարկի և հիմքերի ներկայացումից հետո՝ տասնօրյա ժամկետում, Վարձատուին փոխհատուցել Անտառային կոմիտեի և Վարձատուի միջև Հոդամասի անհատույց օգտագործման պայմանագրի կնքման համար վերջինիս կատարած ծախսերի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի, միասնական տեղեկանքի ձեռքբերման, նոտարական ծառայության և այլ անհրաժեշտ ծախսերի գումարները:

Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրով սահմանված ժամկետներում վարձավճարի գծով վճարումները չկատարելու դեպքում Վարձակալը կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան տարեկան վարձավճարի չափը:

4.2. Եթե Վարձակալը Պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Հոդամասը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջելու կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե այդ վճարումը լիովին չի հատուցում Վարձատուին պատճառված վնասները, ապա վերջինս կարող է պահանջել հատուցել դրանց մնացած մասը:

4.3. Պայմանագրի 3.4.3.-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետներում Անտառօգտագործման ծրագրի իրականացման վերաբերյալ գրավոր հաշվետվությունը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում Վարձակալը Վարձատուի պահանջով վճարում է տուգանք՝ Պայմանագրի 2.2.-րդ կետով սահմանված տարեկան վարձավճարի 10 (տասը) տոկոսի չափով:

4.4. Պայմանագրի 4.1.-ին կետով սահմանված տույժի կամ 4.3.-րդ կետով սահմանված տուգանքի վճարումը Վարձակալին չի ազատում պարտավորությունների հետագա կատարումից և խախտումների վերացման պարտականությունից:

4.5. Եթե Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Հոդամասը կամ խոչընդոտներ է ստեղծել Հոդամասը Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար, Վարձատուն պարտավոր է

վճարել տույժ՝ իր պատճառով Հողամասի օգտագործման անհնարինություն առաջացրած յուրաքանչյուր օրվա համար տարեկան վարձավճարի 0.1 տոկոսի չափով:

4.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում մեղավոր կողմն իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության է կրում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

5.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են տարերային աղետները, մասնավորապես՝ երկրաշարժը, ջրհեղեղը և այլն, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

5.2. Կողմը, որն ընկել է սույն պայմանագրի 5.1.-ին կետում սահմանված անհաղթահարելի ուժի հետևանքների ազդեցության տակ, պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան անհաղթահարելի ուժի այս կամ այն հանգամանքի առկայության մասին իմանալու օրվան հաջորդող առաջին 5 օրացուցային օրվա ընթացքում այդ մասին տեղյակ պահել մյուս Կողմին՝ կցելով սույն պայմանագրի կամ դրա առանձին պարտավորության կատարման վերաբերյալ օբյեկտիվ անհնարինության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր (այդպիսիք առկա լինելու դեպքում): Նման ծանուցման բացակայությունը զրկում է համապատասխան Կողմին հետագայում, որպես սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարման խոչընդոտման օբյեկտիվ պատճառ, հղում կատարելու անհաղթահարելի ուժի ազդեցությանը կամ վերջինիս այս կամ այն հանգամանքներին:

5.3. Սույն պայմանագրի 5.1.-ին կետում սահմանված այս կամ այն անհաղթահարելի ուժի ի հայտ գալու դեպքում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման համապատասխան ժամկետները երկարաձգվում են մինչև անհաղթահարելի ուժի (ֆորս մաժորի) հանգամանքների վերացման պահը (օրը):

5.4. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծելու սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին: Նման գրավոր ծանուցումը համապատասխան Կողմը պարտավոր է ուղարկել կամ հանձնել մյուս կողմին ենթադրվող լուծման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ:

6. Պայմանագրի դադարումը և վաղաժամկետ լուծումը

6.1. Պայմանագիրը դադարում է՝

6.1.1. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում կամ

6.1.2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ

6.1.3. Պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում:

6.2. Վարձատուի պահանջով Պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.2.1. Հոդամասն օգտագործել է Պայմանագրի պայմանների կամ Հոդամասի նշանակության խախտումներով.

6.2.2. Էականորեն վատթարացրել է Հոդամասի վիճակը.

6.2.3. Պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո պարբերաբար կամ երկու անգամ անընդմեջ չի մուծել վարձավճարը.

6.2.4. Վարձատուի պահանջով երկու անգամ անընդմեջ չի ներկայացրել կամ թերի է ներկայացրել Պայմանագրի 3.4.3.-րդ ենթակետով սահմանված Անտառօգտագործման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը.

6.2.5. Խախտել է Պայմանագրի 1.2.-րդ կետով, 3.4.4.-րդ, 3.4.5.-րդ, 3.4.7.-րդ, 3.4.8.-րդ, 3.4.9.-րդ, 3.4.11.-րդ կամ 3.4.12.-րդ ենթակետով սահմանված պահանջները, սահմանափակումները կամ պայմանները.

6.2.6. Պայմանագրի 2.4.-րդ կամ 2.5.-րդ կետով նախատեսված դեպքում, կարգով և ժամկետներում չի կնքել Պայմանագրի 2.4.-րդ կամ 2.5.-րդ կետով սահմանված՝ Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը: Սույն ենթակետով սահմանված հիմքով Պայմանագիրը լուծվելու դեպքում Վարձակալը Վարձատուի պահանջով պարտավոր է վճարել նաև մինչև Պայմանագրի լուծումը Հոդամասը տիրապետելու և օգտագործելու ժամանակահատվածի համար հաշվարկված վարձավճարի գումարի տարբերությունը, որը պետք է վճարեր Պայմանագրի 2.4.-րդ կամ 2.5.-րդ կետով սահմանված՝ Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը կնքելու դեպքում:

6.3. Վարձակալի պահանջով Պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

6.3.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Հոդամասը կամ խոչընդոտներ է ստեղծել Հոդամասը Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.

6.3.2. Վարձակալին հանձնված Հոդամասն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել Պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել Պայմանագիրը կնքելիս.

6.3.3. Եթե Հոդամասը Վարձակալից անկախ պատճառով դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

7. Այլ պայմաններ

7.1. Հոդամասի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ Պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Պայմանագիրը պարտադիր է Կողմերի իրավահաջորդների համար:

7.2. Վարձակալած Հոդամասում Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

7.3. Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ մասին համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Կողմերը համաձայնվում են, որ սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի ծանուցումները, պահանջները, առարկությունները, առաջարկությունները կամ այլ փաստաթղթերը և տեղեկությունները /այսուհետ բոլորը միասին՝ առաքանիներ/ ուղարկվեն Կողմերի՝ սույն պայմանագրի 8-րդ բաժնում նշված գտնվելու կամ հաշվառման կամ բնակության վայրի հասցեներով /այսուհետ՝ փոստային հասցե/ կամ էլեկտրոնային փոստի հասցեներին, ինչը սույն պայմանագրի իմաստով համարվում է պատշաճ ծանուցում: Կողմը պարտավորվում է իր՝ սույն պայմանագրի 8-րդ բաժնում նշված փոստային հասցեի կամ էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխության դեպքում 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին պատշաճ ծանուցել մյուս Կողմին, հակառակ դեպքում կրում է այդ ծանուցման չիրականացման բացասական հետևանքների ռիսկը: Կողմի՝ սույն պայմանագրի 8-րդ բաժնում նշված փոստային հասցեով ուղարկված առաքանիները համարվում են Կողմին հանձնված ուղարկման օրվան հաջորդող յոթերորդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում կհաստատվի, որ առաքանու հանձնումը տեղի չի ունեցել փոստային կապի ծառայություններ մատուցող կազմակերպության մեղքով կամ անհաղթահարելի ուժի հետևանքով: Կողմի՝ սույն պայմանագրի 8-րդ բաժնում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված առաքանիները համարվում են Կողմին հանձնված ուղարկման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

7.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած բոլոր տեսակի վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով այդպիսիք առաջանալու դեպքում յոթնօրյա ժամկետում: **Նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը (պայմանագրային ընդդատություն):**

7.6. Կողմերի՝ սույն պայմանագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

7.7. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Վարձակալի՝ Պայմանագրից ծագող վարձակալության իրավունքի պետական գրանցման պահից:

7.8. Պայմանագիրը կնքվում է չորս հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ, մեկ օրինակը թողնվում է նոտարին, իսկ մեկ օրինակը ներկայացվում է Կադաստրի կոմիտե:

8. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ՎԱՐՁԱՏՈՒ

ՎԱՐՁԱԿԱԼ

«Հայանտառ» ՊՈԱԿ

«_____»

ՀՎՀՀ՝ 02512343

ՀՎՀՀ՝ _____

Հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129

Հասցե՝ _____

Էլ. փոստի հասցե՝ _____

Էլ. փոստի հասցե՝ _____

հ/հ՝ 900018002270, ՀՀ ՖՆ գործառնական
վարչություն, N 1 գանձապետական
բաժանմունք

Տնօրեն՝ _____

Տնօրեն՝ _____

Լիազորված անձ՝ _____
